ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՋԱՏ ԱՍԱՏՈՒՐՈՎԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԱՋԱՏ ԱՍԱՏՈՒՐՈՎ, ՈՐ ՅԱԴԼԵՐ, ՌՈՒՍԱՍՏԱՆ

Հարաւային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Մովսէս եպիսկոպոս Մովսիսեանից տեղեկացանք Ձեր բազմարդիւն գործունէութեան մասին՝ ի խնդիր Առաքելական մեր Մայր Եկեղեցու պայծառութեան եւ հաւատաւոր ժողովրդի բարօրութեան:

Մեծարգոյ պրն Ասատուրով, մեծապէս ուրախ ենք հասարակական կեանքում արձանագրած Ձեր յաջողութիւններով, որ հայրենիքից հեռու բարի անուն ու ճանաչում են բերում Ձեզ՝ մեր Եկեղեցու ու ժողովրդի արժանաւոր զաւակիդ: Գովելի ու բարձրօրէն գնահատելի են Ձեր ջանքերը՝ ներդրուած յանուն Հարաւային Ռուսաստանի հայոց թեմի զօրացման ու պայծառութեան: Աստուածահաճոյ Ձեր ձեռնարկների պսակն է Ադլերում կառուցուած Սուրբ Սարգիս եկեղեցին, որի սրբազան կամարների ներքոյ բարեպաշտ հայորդիները իրենց աղօթքն են առ Աստուած բարձրացնում, հաղորդուում Աստուածային սուրբ խորհուրդներին եւ արժանանում երկնապարգեւ շնորհների:

Հարաւային Ռուսաստանի հայոց թեմի բարեջան առաջնորդի եւ Թեմական Խորհրդի խնդրանքին ընդառաջ, համազգային նուիրական մեր սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնը եւ առ ի գնահատութիւն ազգային կեանքում Ձեր մեծ վաստակի՝ շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով հայցում ենք Ամենակալ Աստծուց, որ Իր հանապազ օրհնութեան ներքոյ միշտ քաջառողջ ու երջանիկ պահի եւ պահպանի Ձեզ ու Ձեր

ընդանեաց անդամներին՝ առաջնորդելով բարի ու հայրենանուէր նորանոր իրագործումների:

Թող Ձեր յարկը շնորհընկալը լինի երկնապարգեւ բիւր բարիքների եւ առատ ողորմութեան:

«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան». ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 5-ն Փետրուարի
յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 79